ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2016 թվականի թիվ 2 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊՈԱԿ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. հուլիսի 7-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության /նշանակման/ մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 992-Ն որոշմամբ հաստատված օրինակելի կարգի 5.1 կետով և ՀՀ Տավուշի մարզպետի 2011թ. դեկտեմբերի 19-ի թիվ 203-Ն որոշմամբ հաստատված կարգի 5.1 կետով՝

ո ր ո շ ու մ եմ.

1. «Աչաջրի առողջության կենտրոն» ՊՈԱԿ տնօրենի թափուր պաշտոնի համար 03.02.2016թ., «Ոսկեվանի գյուղական բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ տնօրենի թափուր պաշտոնի համար 04.02.2016թ., «Զորականի գյուղական բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ տնօրենի թափուր պաշտոնի համար 05.02.2016թ. և «Բագրատաշենի գյուղական բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ տնօրենի թափուր պաշտոնի համար 10.02.2016թ. հայտարարված մրցույթները համարել չկայացած:

2. Աշխատակազմի ղեկավար Ս. Դավթյանին՝ մեկամսյա ժամկետում ապահովել նոր մրցույթների անցկացման մասին հայարարության հրապարակումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2016թ.հունվարի 12
ք.Իջևան